

5.	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ AGRICULTURE СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЕ НАУКИ
----	--

**ԲՈՒՍԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՎԱՆԱ ԼԵՒ ԱՎԱԶԱՆՈՒՄ,
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂԻ ԶՐԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Մ. Պ. ԱՎԱԳՅԱՆ

*Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր,
ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան*

Սևանա լճի ավազանը տեղաբաշխված է Հայաստանի Հանրապետության արևելյան մասում և իրենից ներկայացնում է միջլեռնային փակ գոգավորություն՝ հյուսիս-արևմուտքից հարավարևելյան ձգվածությամբ: Գոգավորության հատակը (ծովի մակարդակից շուրջ 1820–1900մ նիշերով) զբաղեցնում է Սևանա լիճը:

Սևանա լճի ավազանը հանդիսանում է մեր հանրապետության ամենաընդարձակ գյուղատնտեսական տարածաշրջաններից մեկը՝ իր ինքնատիպ ֆիզկաաշխարհագրական պայմաններով, երկրաբանական կառուցվածքով, գեոմորֆոլոգիական, կլիմայական, ջրագրական, հողային և բուսական ծածկույթի առանձնահատկություններով:

Հողակլիմայական, լիթոլոգիական ռելիեֆային պայմանների բազմազանությունը իր դրոշմն է թողել լճավազանի բուսական ծածկույթի վրա և պատահական չէ, որ այստեղ այն աչքի է ընկնում իր տեսակային կազմի մեծ բազմազանությամբ:

Սևանա լճի ավազանի բուսական ծածկույթի հետազոտությամբ զբաղվել են Ա. Կ. Մաղաքյանը, Ն. Տ. Սահակյանը, Լ. Ա. Թախտաջյանը և այլք: Հետազոտությունների արդյունքները հավաստում են Սևանա լճի ավազանում բուսատեսակների աշխարհագրական տարածման վերընթաց գոտիականությունը:

Սևանա լճի ավազանում առանձնացվում են չորս բուսական գոտիներ.

- 1) լեռնատափաստանային,
- 2) մարգագետնատափաստանային,
- 3) մերձալպյան մարգագետնային,
- 4) ալպյան մարգագետնային:

Առանձին բուսական գոտիներում տարածում ունի նաև ճահճային տիպի բուսականությունը:

1. Լեռնատափաստանային բուսականություն. զարգանում է՝ սկսած լճի ափային մասերից մինչև ծովի մակարդակից 2350մ բարձրությունները: Տիպիկ լեռնատափաստանային բուսականության տակ ձևավորվել են լեռնային սևահողերը:

Լեռնատափաստանային գոտու սահմաններում առանձնացվում է երկու ենթագոտի.

ա) չոր տափաստանային,

բ) տիպիկ կամ խոնավ տափաստանային:

Չոր տափաստանային ենթագոտում լայն տարածում ունեն հացազգի-տարախոտային բույսերը. շյուղախոտերը (*Festuca ovina* L.), փետրախոտը (*Stipa pulcherima* C. Koch.), կելերիան (*Koeleria gracilis* Pers.), տափաստանային տիմֆեկան (*Fhleum phoides* Z.), ժիտնյակը (*Agropyrum cristotum*), ուրցը (*Thymus* sp.), խրնդատակը (*Verboscum lobelianium*) և այլն:

Տիպիկ խոնավ տափաստանային բուսականությունը զարգանում է Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների նախալեռնային մասերում, հատկապես ստվերահայաց լանջերում, որոնց տակ ձևավորվում են լեռնային սևահողերը: Այստեղ հանդիպում են փետրախոտային և փետրախոտա-շյուղային բուսական խմբավորումներ: Տիպիկ տափաստանային հարուստ բնական բուսածածկույթի տակ գերակշռող են համարվում փետրախոտը (*Stipa capillata* L.), շյուղախոտակոսավորը (*Festuca sulcata* L.), ոչխարի շյուղախոտը (*Festuca ovina* L.), դաշտավլուկ տիխուկավորը (*Poa bulbosa* L.), ուրցը (*Thymus Kotsehyanus* Boiss.) և այլն:

Լեռնալանջերի էրոզացված հատվածներում լայն տարածում ունեն փետրախոտային, փետրախոտա-շյուղախոտային, հացազգի-տարախոտային բուսական խմբավորումները, ոչխարի շյուղախոտը (*Festuca ovina* L.), շյուղախոտակոսավորը՝ (*Festuca sulcata*), կելերիան (*Koeleria gracilis* Pers.) և այլն:

2. Մարգագետնատափաստանային բուսականություն. զարգանում է տիպիկ տափաստանային բուսականությունից վերև՝ մինչև 2350մ բարձրության վրա: Այստեղ աճող բույսերը իրենց հզոր արմատային համակարգի շնորհիվ առաջացնում են հզոր ճմաշերտ՝ մինչև 12-15սմ հաստությամբ: Առավել տարածված բուսատեսակներից են համարվում մարգագետնային շյուղախոտը (*Festuca Pratensis* L), երեքնուկ մազոտը (*Trifolium trichocephalum* M.B.), ոչխարի շյուղախոտը (*Festuca ovina* L), կելերիան (*Koeleria gracilis* Pers), փետրախոտը (*Stipa capillata* L), ցորնուկը (*Bromys variegatus* Nevski) և ուրիշներ:

Բակլազգիներից հանդիպում են բազմամյա վարսակը (*Vicia variabilis* fr. et. sent), բորդգիլովյան երեքնուկը (*Trifolium Bordzilovskyi* A Grossh), երեքնուկ մազազլխիկավորը (*Trifolium thichocephalum* M.B.), երեքնուկ ալայյանը (*Trifolium alpestres*), աշվույտը (*Medicago* L) և այլք:

3. Մերձալպյան մարգագետինները. զբաղեցնում են Գեղամա լեռնավահանի արևելյան և Վարդենիսի լեռնավահանի հյուսիսային լանջերի, 2350-2800մ բարձրությունները: Այստեղ հացազգի-տարախոտային խմբավորումների տակ ձևավորվում են մերձալպյան թույլ ճմային հողեր: Բուսական ծածկույթի տակ

գերակշռող են ոչխարի շյուղախոտը (*Festuca ovina* L. Bea), անքիստ ցորնուկը (*Zerna Variagata* M. B. Nevski) և ուրիշներ:

Մերձալպյան մարգագետինների վրա զարգանում են ցորնուկա-շյուղախոտային և ցորնուկա-երեքնուկային բույսերը, որոնցից գերակշռում են ոչխարի շյուղախոտը (*Festuca ovina* L), կովկասյան կելերիան (*Coelaria caucasica*) անքիստ ցորնուկը (*Zerna variegata* M.B. Nevski), մարգագետնային տիմոֆեենկան (*Fhleum pratensis* L):

Բուսական ծածկույթում գերակշռող են հանդիսանում հացազգիները, որոնք կազմում են բուսականության 80-85%—ը: Բակլազգի և տարախոտային բուսականությունը համեմատաբար քիչ է՝ 8-10% և 6-7%:

Չոր լանջերում հանդիպում են ցորնուկա-երեքնուկային և տարախոտա—հացազգի մարգագետիններ, որտեղ աճում են միաժամանակ թունավոր և կոշտացողուն բույսեր. ինչպես, օրինակ, ուրցը (*Thymus* sp), քոսքսուկ կովկասյանը (*Scabiosa Caucasica* W), մակարդախոտ իսկականը (*Galium Verum scop*) և ուրիշներ:

Մերձալպյան մարգագետիններին բնորոշ է ճիմառաջացումը: Ճիմառաջացող բուսատեսակներից հանդիպում են անքիստ ցորնուկը (*Zerna variegata*), ոչխարի շյուղախոտը (*Festuca ovina* L), կելերիա կովկասյանը (*Coelaria Caucasica Trin*) և ուրիշներ:

4. Ալպյան մարգագետիններ. զբաղեցնում են Գեղամա և Վարդենիսի լեռնավահանների բարձրադիր մասերը (ծովի մակերևույթից 2400-2500մ-ից մինչև 3500մ բարձրությունները), օգտագործվում են որպես ամառային արոտավայրեր: Այստեղ հիմնականում հանդիպում են եռատամ զանգակը (*Campanula Fridentata*), ոչխարի շյուղախոտը (*Festuca ovina* L), բոշխը (*Carex trestis* M.B.) և այլն: Բացի այս բուսատեսակներից, ճահճացած որոշ տարածքներում (ինչպես ցածրադիր, այնպես էլ ալպյան գոտիներում), գերակշռում է ճահճային բուսականությունը: Որոշ հատվածներ, որտեղ բուսածածկույթի որակը վատ չէ, օգտագործվում են որպես խոտհարքներ: Ճահճապատ զանգվածներում հիմնականում աճում են բոշխեր (*Carex hirta*) և ուրիշներ:

Սևանի լեռնաշղթայի արևելյան լանջերի առանձին մասերում աճում է անտառային և հետանտառային բուսականություն, հիմնականում թփուտային տիպի կաղնի (*Quercus macranthera* Fet M), ասպիրակ (*Spiraea Kypericifolia* L), գիհի (*Tuneporus polucarpus* C. Koch) և ուրիշներ:

Վերլուծելով Սևանա լճի ավազանի հողագոյացման ֆիզիկաաշխարհագրական պայմանները, կարելի է հանգել այն եզրակացության, որ լեռնային խիստ կտրտված ռելիեֆի պայմաններում թափվող տեղումների քանակը, հատկապես մշակաբույսերի վեգետացիայի ընթացքում, անբավարար է բարձր բերքի ձևավորման համար:

Չողում օրգանական նյութերի նվազ պարունակությունը առաջին հերթին պայմանավորված է տեղանքի անբարելավ ջրային ռեժիմով: Օդի բարձր ջերմաստիճանի և սիստեմատիկ գործող քամիների ազդեցության տակ հողում եղած խոնավությունը արագ գոլորշիանում է: Ստեղծված օդակյաց պայմաններում կուտակված բուսական մեռած մնացորդները արագ հանքայնանում են և հողում կուտակվում է չնչին քանակի հումուս: Նման կլիմայական պայմաններ

րում, առանց հողում ջրի օպտիմալ պաշարների առկայության, հնարավոր չէ աճեցվող մշակաբույսերից ապահովել ծրագրավորված բերք՝ նույնիսկ բարձր ագրոտեխնիկայի կիրառման պայմաններում:

Հայաստանի տարածքին սպառնացող անապատացման վտանգին դիմակայելու կարևոր միջոցառումներից մեկը ոռոգովի հողատարածությունների ընդարձակումն է: Ցամաքային կլիմա ունեցող մեր հանրապետությունում բույսերը վեգետացիայի ընթացքում մշտապես տուժում են սելավային բնույթ կրող ու հսկայական ավերածություններ պատճառող մակերեսային հոսքերից: Ուստի տարածքներից անօգուտ հեռացող մակերեսային հոսքաջրերի ամբարումը և ինքնահոս մատուցման եղանակով ոռոգման նպատակներով օգտագործումը ջրային պաշարների արդյունավետ օգտագործման և ոռոգովի հողատարածությունների ընդարձակման կարևոր միջոցառումներից մեկն է:

Գյուղատնտեսության վարման ցածր մակարդակի պատճառով սահմանափակ են օգտագործվում օրգանական ու հանքային պարարտանյութերը, ագրոքիմիկատները, խիստ թերի են կատարվում մշակաբույսեր աճեցնելու սահմանված տեխնոլոգիաները: Արդյունքում, բնական է, ստացվում է խիստ ցածր բերք, որը բոլորովին չի համապատասխանում գոտու կենսակլիմայական պայմանների պոտենցիալ հնարավորություններին:

Սևանի ավազանում մշակաբույսերի ցածր բերքի ստացման գլխավոր պատճառներից մեկը հանդիսանում է հողում և օդում խոնավության պակասը, երաշտն ու խորշակները, որն արտահայտված է ամենուրեք՝ 60-135 օր տևողությամբ: Երաշտի ու խորշակների դեմ հեռահար ծրագրերի մշակումը թելադրվում է կլիմայի կանխագուշակվող գլոբալ փոփոխություններով՝ 2-3⁰ ջերմության բարձրացման և 10-15% մթնոլորտային տեղումների նվազեցման հանգամանքով:

Ըստ Է. Մ. Հայրապետյանի և Ա. Վ. Շիրինյանի՝ մեր հանրապետության առանձին տարածաշրջաններում միայն երաշտի ու խորշակների պատճառով գրեթե առանց բացառության ամեն տարի 30-35% բերքի կորուստ է լինում: Իսկ երաշտի ու խորշակների դեմ պայքարի, տարածաշրջանների ջրային ռեժիմի բարելավման ամենահզոր ու անփոխարինելի միջոցը պաշտպանական անտառտնկարկների հիմնադրումն է: Հակաէրոզիոն միջոցառումների համակարգում պաշտպանական անտառաշերտերը նպաստում են դաշտում կուտակելու մինչև 5,0-7,0 սմ և ավելի ձյուն՝ հողում ջրի պաշարն ավելացնելով 2,5-3,0%-ով:

Սևանի ավազանում ագրոկլիմայական պայմանների ցուցանիշները վկայում են այն մասին, որ նույնիսկ համեմատաբար բարձր մթնոլորտային տեղումների առկայության պայմաններում, մթնոլորտի բարձր ջերմաստիճանով պայմանավորված ուժեղ գոլորշիացման հետևանքով հողում ներծծված ջուրը արագ գոլորշիանում է, և մշակաբույսերի բարձր բերքի ձևավորումը գործնականում անհնար է դառնում:

Հետևաբար, հողի ջրային ռեժիմի բարելավման հիմնական ուղին մնում է հողի մելիորատիվ վիճակի բարելավումը և մթնոլորտային տեղումների առավելագույն չափով կուտակումը հողի մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Հայրապետյան Է. Մ., Շիրինյան Ա. Վ.** Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության էկոլոգիական հիմնախնդիրները և բարելավման ուղիները // Գիտաարտադրական կոնֆերանսի նյութեր, «Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության ժամանակակից հիմնախնդիրները», Երևան, 1999, էջ 7-12:
2. **Հայրապետյան Է. Մ., Ավագյան Ս. Պ.** Ոռոգման ջրի խնայողաբար օգտագործման մի քանի հարցեր Սևանի ավազանի պայմաններում // Երևան, 3-րդ գիտ. կոնֆերանսի նյութեր, «Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման ու ջրախնայողության հիմնահարցերը», նոյեմբեր 1999, էջ 39-45:
3. **Магакян А. К.** К характеристике растительности бобовых перелогов Агмаганского хребта/ Ереван, 1934, 26 с.
4. **Магакян А. К.** Растительность Арм. ССР // Изд. АН СССР, 1941, 276с.
5. **Тахтаджян А. Л.** Ботанико-географический очерк Армении // Тр. Ботанического института, Т. 2, Тбилиси-Ереван, 1941, 180 с.

ОСОБЕННОСТИ РАСПРОСТРАНЕНИЯ РАСТИТЕЛЬНОГО ПОКРОВА БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН, ИХ ЗНАЧЕНИЕ В ДЕЛЕ УРЕГУЛИРОВАНИЯ ВОДНОГО РЕЖИМА ПОЧВЫ

М. П. Авагян

Работа посвящена рассмотрению особенностей растительного покрова бассейна озера Севан.

Опустошение бассейна озера Севан, который в системе верхней горизонтальной является одним из самых обширных сельскохозяйственных регионов Армении, который отличается своими уникальными физико-географическими условиями и геологическим строением, особенностями почвенного покрова. Оно оставило свой отпечаток на растительный покров, который отличается разнообразием своего вида и существенно влияет на водный режим региона и на развитие опустошения.

THE PECULIARITIES OF DISTRIBUTION OF FLORA IN THE BASIN OF THE LAKE SEVAN, ITS IMPORTANCE IN THE REGULATION OF WATER REGIME

M. P. Avagyan

The lake Sevan in the system of the upper zone of lands happens to be one of the most extended agricultural regions in our republic, which is prominent with its physical and geographical conditions, geological structure, peculiarities of cover of earth. It has influenced the flora which is prominent with the great diversity of its categories, which in its turn essentially affects on the regulation of water regime and devastation processes of the region.